

Փափին սարայրն : Եւ եղեւ մեծ ուրախութիւն  
 80 եւ ցնծութիւն օրն այն յոյժ յոյժ : Եւ ասին  
 մեզ, թէ ամէն տարի այսպէս տօնանմա կու  
 լինի . եւ մին տօնանման ԼՈՒ ՂՈՒՐՈՆՆԷ կու  
 նայի : Անտի զնացին ի սուրբն Պետրոս . Փափն  
 ի պատարագ մտաւ . եւ անդ եւս յուրով շէն-  
 85 լիքնի եղեւ : Եւ այս չափս բաւ է յսողացն :

Եւ երբնոցա տօն լինի, զոր Փէսթ կոչեն,  
 վա՛յ ան մարդուն, որ բանի կամ խանութ  
 նստի կամ զատ ծախէ . յահէ Փափին վախեն  
 եւ պինտ պահեն դտօնս տէրունի :

ՆՈՒԷՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՊԱՆԻՈՅ

90 Այլ եւ ասին թէ Սպանիու թաղաւորէն  
 թային կայ Փափին՝ ամէն տարի ԻԵՌԻ ոսկի  
 եւ ձի մի ազնիւ, որ բառնան ի վերայ զխա-  
 գինան եւ բերեալ ծնկսի առաջի Փափին եւ  
 զգլուխն խոնարհեցուցանէ . եւ երբ Փափն  
 95 խաչակնքէ, նա կանգնի . զի ուսուցեալ են  
 զնա : Եւ բնական խորաքով են ձիքն . որպէս  
 եւ ի Ստամպօլ ունի խօնթքարն ձիան, որ երբ  
 նստի ի վերայ եւ զնայ նամագ, գլխովն բա-  
 րեւ տայ երկու կողմանց մարդկաց . եւ այլքն  
 100 զուքր տային մարդկապէս եւ խելօք կամկար  
 զնային :

ՀՐԵԱՅՔ

Կայր բարի սահմանք մի այլ աշխարհն  
 Փափին եւ սաստիկ հրաման ի վերայ Հրէից,  
 որ ամէն շաբաթ օր պիտոր երթան եկեղեցի .